Կատարինէ Յարութիւնեան Կոստենցեանց	10
Մարիամ Միքայէլեան Ասատուրեանց	10
Ծաղիկ Յակովբեան Պօղովեանց	10
Մարիամ Յովհաննէսեան Պօղովեանց	10
Հռիփսիմէ Մկրտչեան Սուրաբէկեանց	10
Ովսաննա Գրիգորեան Հախվերդեանց	10
Հռիփսիմէ Յովակիմեան Նեմցեանց	10
Եղիսաբէթ Գարրիէլեան Քուրդեանց	10
Հռիփսիմէ Գարրիէլեան Կազաչկեանց	10
Եղիսաբէթ Զաքարեան Աղաբաբայեանց	10
Մանուշակ Սիմէոնեան Արզարեանց	10
Եղիսաբէթ Կոստանդիանոսեան Տարասեանց	10
Կատարինէ Յակովբեան Կազաչկեանց	10
Կատարինէ Յակովբեան Կրանիշչիկեանց	10
Մարիամ Գարրիէլեան Բուրջալեանց	10
Եղիսաբէթ Անդրէասեան Գոանգուլեանց	10
Մարիամ Մկրտչեան Մխիթարեանց	10

Գումար 240

Հոգաբարձուք.

Ա–ռաջ Վարդապետ Յովսէփ
Ռ–ոնիմրէեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէոն Պօղովեանց

ԲՈՂՈՔ

Խմբագրոնեան Աբարաք Ամոսգրոյ.

Անցեալ ապրիլ ամսագրիդ միջոցաւ կարդացի ես և պարոն Տ. Գուգարացւոյ գրուածքը, որը համարեա թէ արձակուել է բարձր արժ. Յովսէփ աւագ քահանայի վրայ։ Պարզն պիտոյ է ասել, շատ անիրաւացի է վարուել պարոնը Ս. Հօր հետ. վասնզի նորա գործունէութիւնը մեզ քաջ յայտնի լինելով՝ կը վստահանամ մէկէն ի մէկ յիշել նորա կրքէն յառաջացած հակասական նամակն։ Տէր Հայրը ոչ երբէք այնպէս չէ արել, ինչպէս կ'յիշէ պարոնը, և ոչ երբէք հիմնաղիր չէ համարել զինքն, և ոչ երբէք դորա վերաբերութեամբ չէ ստիպել զԱրտաղանցն, ինչպէս անձամբ անձին տեղեկացայ Համամու գիւղացւոցմէ, որ բոլորովին ի զուր և նախանձու ժայթմունքներ են, կամ աւելի լաւ ևս է ասել, սրտաշահութիւն է մի պարոնի, որը միջամտութիւն կը գործէ ուսումնարանական գործերուն մէջ։ Եթէ պ. Գուգարացին արդարասէր անձն էր, կ'կարողանար Տէր Հօր ամենայն մի խօսած պիտանացու խօսքերն յիշել, ինչպէս և ասաց այն տեղի բարեկրօն քահանաներէն մէկը, թէ՝ «Տէր Յովսէփը բոլորովին այդ գործին մէջ արդար է թէև կան հանգամանքներ, որին ես ևս ... կասեմ, բայց երբ գործն սորա մէջն է կարդս վկայ շատ արդար է»։

Եզրափակելով Նամակս՝ կ'խնդրեմ տեղի շնորհէք այս մի երկու խօսքերին, ոչ իբրև կողմնապահական խօսքեր, այլ իբրև արդար բողոք յիմ կողմանէ առ սիրելի ընթերցողս, որ ազատ մնան Գուգարացւոյ այս նկատմամբ տուած սխալ տեղեկութենէն։

Սիմէոն Վ–էյէլեանց։

1871 թ. 15ն Յուլիսի
ՅԱՂԷՔՍԱՆԴՐՈՊՈԼ

ԵԿԱՏԵՐԻՆԱՏՈՐ

Խմբագրոնեան Աբարաք Ամոսգրոյ,

Համաձայն սրբասնեալ փափագանաց Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Գէորգայ Դ ի Սրբազնակատար Մեծ Հայրապետին մերոյ, և կարգադրութեան Հոգաբարձական վարչութեան տեղւոյս Հոգևոր Մեսրոպեան երկսեռ դպրոցիս, ի 15 Յունիսի ներկայ տարւոյս՝ սկիզբն արարեալ վասն անցելում ամի՝ տարեկան հարցաքննութեան աշակերտաց և աշակերտուհեաց, աւարտեաց ի 23ն նոյն ամսոյ փոյթեռանդն պարապմամբ հարցաքննութեան յիւրաքանչիւրում աւուր միոյ կամ երկուց առարկայից ուսմանց Նախապատրաստական և Առաջին դասատանց աշակերտաց և Նախապատրաստական Օրիորդաց, կայացելոյ ի 13ն Նոյեմբերէ 1870 ամի. և զգտեալ յառաջադէմ զաշակերտսն յառաջնում դասատան թուով 6 վերածեալ յԲ. դասատուն. և ի Նախապատրաստական դասարանէ վերածեաց զա-

շակերտս վեցս յառաջնում դասատան նոյնպէս և զընտրեալսն և զքաջալարժան յօրիորդաց թուով 10ն զետեղեաց յառաջնում դասատան, զորոց Հոգաբարձութիւնս խնդրէ խոնարհաբար հրատարակել միջոցաւ պատուական Ամսագրոյդ ի լուր և ի բերկրանս բարենախանձ մերազնեայց։

Արդ մնալով ակնկալու խնդրանաց մերոց

եմք և մնամք

Բարեացապարտք և բարեմաղթողք Ազգապարծան ձեռնարկութեանց միաբանական Խմբագրութեան

Լուսակերտ Մեծի Ս. Աթոռոյդ

Հոգաբարձուք

Կարապետ Օհան՝ Օրբիլեան

Կարապետ Փ. Հէրէկեան

Յովհաննէս Թումանեան

Մէյթայել Մահրէոեան

Ներկայիս, Օգոստոս Պոխրիսոբայցեանց

Ի 5-ն յուլիսի 1871 ամի

Յեկատերինոդար։

ԱՇՏԱՐԱԿ։

Կարծեմ ոչ սակաւ մխիթարութիւն կ'լինի յիշելու պատրաստուած խօսքերս սիրելի ընթերցողաց, վասնորոյ ահա ստիպեալ փութամ յայտնել. սիրելիք՝ ընդհանուրին յայտնի ինչ էր որպէս և ձեզ մեր մատաղ եղբայրների և քոյրերի մինչ ցայսօր անհոգ մնալը, որոնցից՝ հարկաւոր է և շատ՝ ապագայի համար նոր կրթեալ ազգ բաղկանալ ժամանակի պահանջմանց համեմատ. որոց համար մեր ազգի մեծագոյն մասը անտարբեր մնացած էր գիւղերում և գիւղաքաղաքներում խոր քնոյ մէջ մեռելակերպ ընկղմած. սակայն այժմ երանի մեզ և մեր ազգին, որ կտեսնենք մեր երկնապարգև Հայրապետի օրօք նոյնպէս և նորա ազգասիրութեան ոգւով կարգաւորեալ դպրոցներ Հայաստանի գիւղերում. որոց մէջ գտնուումեն գեղեցիկ պտուղք ուսման զանազան առարկայից և լեզուագիտութեանց. ինչպէս Եւրոպայի մէջ շատ տեղերում։ Եւ այսպիսի միջոցաւ կ'յուսամ որ տեսնելու են Հայերն Հայաստանի ոսկեայ դարը։ Ասացի գիւղերում. ահա ինչպէս իմ ծնած ու սնած քաղցրանուն Աշտարակ գիւղն. որ թէպէտ լի է բնութեան ամենատեսակ վայելքներով. սակայն զուրկ էին նորա նորաբոյս բանաւոր տունկերը կրթութիւնից, և անճաշակ ուսման քաղցրութիւնից. որոց երբեմն հանդիպելով և նոցա տգիտութիւնը տեսնելով՝ թողեալ ամէն ուրախութիւններս, կ'թաղուէի խորին տրտմութեան մէջ՝ Հայրենիքիս մատաղահաս մանկանց խղճութեան աղագաւ. որոց անբարեկարգ կարգում գտնուումեն և իմ հարազատ եղբայրներս և քոյրերս, որոց թէպէտ հաւասար օգնել կցանկայի բայց աւաղ՝ ոչինչ չէի կարող վճարել. իսկ այս տարի սակս հարկաւոր գործոց երբ անդ գտայ, տեսի երկք ուսումնարաններ արական և իգական սեռի աշակերտներով լի կրթեալ միանգամայն ուսմամբ և բարոյականութեամբ։ Ո՜հ՝ նախանձելի էր արդարև բաղդաւորութիւնն Հայրենիքիս. օրիորդաց ուսումնարանի առաջադիմութիւնը գովութեան արժանի էր, որը Սարգիս աւագ քահանայի տեսչութեան էր յանձնուած Առաքելապատիւ Կաթուղիկոս Հօր ընդհանուր ազգիս Հայկազանց օրհնութեան և յանձնարարական կոնդակաւ, որ միանգամայն տեսուչ և դասատու կարգուած է յիշեալ ուսումնարանին օրիորդաց։ Նա և գովութեան արժանի էին արական սեռի ուսումնարանների վարժապետաց աշխատութիւնքը և պատուելի Հոգաբարձուաց հոգատարութիւնքը, որք ջամբումեն հանապազորդ ուսման կամքը նոցա մատաղահաս կեանքին ինչպէս գթառատ մայր և ի հարկէ նոքա այս բարիքը վայելում են ոչ ապաքէն Վ.ԵՀ. Հօր շնորհօք. ուստի և երգում են միշտ։

,,Կեցցէ բարերար,
,,Հայր մեր Վ.ԵՀ տիրաւ
,,Կացցէ մշտավաւ,
,,Հայկեան ջահ պայծառ։

Նոյնպէս և նոցա ծնողքը լիակատար սրտիւ աղօթում են միշտ և հանապազ այսպէս, Տէ՛ր տուր Հայրապետիս մերում Գէորգայ Կաթուղիկոսի երկարատև կեանք, որպէս զի առաջնորդեսցէ որպէս մեզ նոյնպէս և մեր բոլոր ազգին դէպ ի լուսաւորութիւնը, դէպ ի կրթութիւնը, դէպ ի ազատութիւնը մտաց խաւարի կապանքներից, ինչպէս Մովսէսը, Ահարոնը, և Յեսուն դէպ ի Աւետեաց երկիրը առաջնորդեցին Իսրայելացւոց ազգը ազատելով զնոսա Փարաւոնի տաժանելի ծառայութեան լծից։

Աշխ. Ր. Դաւթեան որբոյ Էրիոյ Էջմ.
Ղուքէր Սարգսեան։

1871 Յունիս 21
Ի Ս. Էջմիածին։

ՀԱՅՈՑ ՀՈԳ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՅ

Խմբագրութեան Էջերէ ամփոփոյ.

Մեր ճանապարհորդութեան առթիւ ի Մայր Աթոռն սրբոյ Էջմիածնի և անտի ի Տփխիս, եթէ յարգանք ունեցանք ի 1ն ամսոյս Աղեքսանդրապոլ քաղաքի Յակոբոյ Արժանապատիւ Աղափիրեանց Գրիգոր Վարդապետի հետ տեսութիւն ա-